

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/2

31 մարտի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի 12.03.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 04.03.2015 թ-ի թիվ 6103794 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի բողոքում բերված փաստարկները.**

Փոստային ծառայության միջոցով ստացվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 04.03.2015 թ. թիվ 6103794 ակտը, որով առաջադրվել է տուգանք՝ 150.000 դրամի չափով:

Ակտը կազմելու համար հիմք է ընդունվել Սևանի ՏՀՏ պետի 02.02.2015 թ-ի թիվ 6203547 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման արդյունքում կազմված թիվ 6203547 արձանագրությունը: Վերջինովս արձանագրվել է, թե իբրև Ա/Ձ Վանիկ Ստեփանյանին պատկանող մանրածախ առևտրի կետից 2015 թ-ի փետրվարի 7-ին, ժամը 14:40-ին քաղաքացի Մերի Թումանյանի կողմից գնվել է 1300 դրամի չափով 400 գրամ խոզի միս, որի համար կատարված վճարման դիմաց չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Թիվ 6203547 արձանագրությունում նշվածը չի համապատասխանում իրականությանը: Դեպքը տեղի է ունեցել հետևյալ կերպ: Մասնավորապես, Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը նշում է, որ 2015 թ-ի փետրվարի 7-ին իրեն պատկանող առևտրի կետը բացել է ժամը 13:00-ի սահմաններում: Ժամը 14:30-ին խանութ է եկել նրա հայրը: Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը խնդրել է նրան մի քանի րոպե գտնվել խանութում, մինչև նա կայցելի մոտակա խանութներից մեկը: Առևտրի կետից իր բացակայելը տևել է մոտ 20-25 րոպե: Երբ Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը վերադարձել է խանութ հայրը հայտնել է, որ իր բացակայության ընթացքում այցելել են հարկային տեսչության աշխատակիցները և հայտարարել, որ խանութից կատարվել է առևտուր, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Հարկային տեսուչներին առաջարկվել է մի փոքր սպասել, մինչև կվերադառնա Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը, սակայն նրանք ինչ-որ գործողություններ են արել ՀԴՄ-ով և հեռացել:

Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը պատասխանել է, որ իր կողմից որևէ ապրանքի վաճառք չի իրականացվել, հետևապես նաև անհրաժեշտություն չի եղել ՀԴՄ կտրոն տրամադրելու:

Ստուգման ակտում արձանագրվածն իրականությանը չհամապատասխանելու փաստը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ այդ ժամանակահատվածում Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը խոզի միսը վաճառել է ոչ թե 3250 դրամով, այլ՝ 3400 դրամով:

Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը նշում է նաև, որ ստուգման ակտը և դրան առնչվող բոլոր փաստաթղթերն իրեն են ուղարկվել փոստային ծառայության միջոցով: Այսինքն, նշված փաստաթղթերը երբևէ չեն ներկայացվել և Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը չի հրաժարվել դրանք ստանալուց:

Ստուգման ակտում արձանագրվել է, թե իբրև Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի բ) ենթակետի պահանջները, այնինչ՝ ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշումը 2015 թ-ի հունվարի 1-ից այլևս չի գործում:

Տվյալ դեպքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 55-57-րդ հոդվածների դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Ա/Ձ Վանիկ Ստեփանյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 04.03.2015 թ-ի թիվ 6103794 ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 02.02.2015 թ-ի թիվ 6203547 հանձնարարագրի Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 07.02.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6203547 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

սույն թվականի փետրվարի 7-ին ժամը 14:40-ին գնորդ քաղաքացի Մերի Թումանյանի կողմից ք.Սևան, Նաիրյան 136 հասցեում գտնվող Ա/Ձ Վանիկ Ստեփանյանին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվել է հսկիչ գնում 1300 դրամի չափով՝ 400 գրամ խոզի միս, որի դիմաց վճարված կանխիկ գումարը Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:45-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Չմուտքագրված գումարը ժամը 14:46-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 1300 դրամի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի կողմից 17.02.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6103794 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 04.03.2015 թ-ի թիվ 6103794 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն. «Ակտում նշվում են՝

...

9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 04.03.2015 թ-ի թիվ 6103794 ակտում նշվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի բ) ենթակետի պահանջները: Այսինքն, Ակտում իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել, նշված է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները, որը, սակայն, 2015 թ-ի հունվարի 1-ից չի գործում: Նշվածից հետևում է, որ Ակտը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Վանիկ Ստեփանյանի բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 04.03.2015 թ-ի թիվ 6103794 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**